ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ԵՎ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Մատավորապես հինգերորդ դարի սկզբներին երկու լուսապայծառ աստղ ծագեց Հայոց աշխարհի մատավոր խավար հորիզոնում, երկու հանճար, որ Հայոց գիրն ու գրականությունը ստեղծեցին և ապահովեցին հայ մշակույթի անարգել զարգացումը։ Դրանք սուրբ Սահակը և սուրբ Մեսրոպ Մաշտոցն էին։

Հանգուցյալ ակադեմիկոս Մ. Աբեղյանը Կորյունի հրատարակության առթիվ իր գրած առաջաբանում, միանգամայն իրավացի նկատել էր, որ «Հունական ազդեցությունը ջլատելու համար հարկավոր էր առաջ բերել հայերեն լեզվով գրականություն ու դպրոց և հայերեն ժամատացություն և գրանով պահպանել Հայոց եկեղեցու միությունը մեկ ընդհանուր կաթողիկոսական իշխանության ներքո» (էջ 6)։ Ահա այս կարևոր գործն իրենց վրա վերցրին սուրբ Սահակը և սուրբ Մաշտոցը։

Առանց Հայոց գրի և գրականության հայ ժողովուրդը վաղուց ի վեր ձուլված կլիներ պարսից, ասորացիների և Հույների մեջ։

Սուրբ Սահակը և սուրբ Մեսրոպ Մաշտոցը Հայոց գիրն ու գրականությունն ստեղծելով հայ ժողովրդի մատավոր լուսավորության հիմնադիրներն ու լուսավորիչները հանդիսացան։

Այդ խնկելիներին՝ սուրբ Սահակ Պարթև կաթողիկոսին և Մեսրոպ Մաշտոցին չերմռեն աջակցել է մեծ հայրենասեր Վռամշապուհ թագավորը։

Ս. Սահակ Պարթևը Ս. Գրիգոր Լուսավորչի ցեղից էր։ Նրա նախնիներն էին քրիստոնեության կրոնը Հայաստանում քարոզող ու տարածող Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, նրա հաջորդը՝ նրա որդիները՝ Արիստակես և Վրթանես հայրապետները, թոռներն ու թոռնորդիք՝ Հուսիկ կաթողիկոսը, Ներսես Մեծը, որին հաջորդեց որդին, Սահակ Պարթևը 387 թ.։

Սահակ Պարթևն իր ուսումն ստացել էր Բյուզանդիոնում՝ այն ժամանակի աշխարհի գիտության և քաղաքակրթության կենտրոններից մեկում, որտեղ, ի միջի այլոց, հմտորեն սովորեց նաև հելլենական լեզուն, ժամանակի երաժշտական և հռետորական արվեստը և փիլիսոփայությունը։

Ս. Մեսրոպ Մաշտոցը Տարոն գավառի Հացեկաց գյուղից էր, Վարդան անունով մի գյուղացու որդի։ Մանկությունից հունական ուսում ստանալով ու ժամանակի բազմաբարդ գիտությունները ձեռք բերելով դարձյալ է Հայոց Աբչակունի թագավորների բաժին Հայաստանը և իբրև զինվորական արքունական գիվանում մեծ պաշտոն է ստանձնում Հայոց աշխարհի պետության հազարապետ Առամանի ձեռքի տակ։ Նա իր պաշտոնի մեջ անձնատուր է լինում կրոնական-ասոված-արանական գրքերի ընթերցանության։ Քրիստոնեական կրոնի գաղափարներով տարվելով նա հանում է իր վրայից իշխանական համարգիտությունը, թողնում պալատական բարձր պաշտոնը, անձնատուր լինում առանձնության, ուսումնասիրում քրիստոնեության

պաղափարները, քրիստոնեություն ուսուցանելով իր մի շարք աշակերտների, նրանց էլ կրոնավոր դարձնում։

Իր քարոզչության ընթացքում Ս. Մեսրոպը հունաց բաժնում հունարեն ավետարան էր կարդում ու հայերեն թարգմանում ու բացատրում հայերին, ասորաց բաժնում ասորերեն, պարսից բաժնում՝ պարսկերեն։

Այդ ժամանակ Հայաստանը բաժանված էր երկու մասի՝ պարսկական և հունական։ Քարոզչության ընթացքում Մեսրոպ Մաշտոցն զգաց, որ հայ ժողովրդի մտավոր առաջադիմությունը ոչ միայն դժվարին, այլև անհնարելի է, որ իր նպատակին հասնելու՝ քրիստոնեությունը հայ ժողովրդի մեջ տարածելու և հայրենասիրական ոգով նրան ի մի խմբելու համար, անփական գիր ու գրականություն է հարկավոր, որ հայերեն գրով գրել-կարդալը և քրիստոնեություն քարոզելը միայն կարող են փրկել հայ ժողովրդին պարսիկների, ասորիների և հույների մեջ ձուլվելուց։

Հայոց գրերի գյուտի գաղափարով ոգևորված Մեսրոպ Մաշտոցը վերադառնում է Ս. Էջմիածին և իր այդ միտքը հայտնում Սահակ Հայրապետին։

Ս. Սահակը և Մեսրոպը գիմում են ժամանակի թագավոր Վռամշապուհին և նրա աջակցությունը խնդրում հայկական գիրը գտնելու և գրականություն ստեղծելու գործում։

Ուրախանում է Վռամշապուհը և խոստանում է իր ջերմ աջակցությունը հայրենասեր գիտնականներին, գրերի գյուտի վառեմ գործը հանձնելով Ս. Մեսրոպ Մաշտոցին։

Սակայն հարց է առաջանում՝ մինչ մեսրոպյան գրերը հայերն ունեցել են գիր, թե ոչ, և եթե ունեցել են ի՞նչն է ստիպել հայերին նոր գիր ունենալու։

Հնում մինչ մեսրոպյան գրերը հայերը, իհարկե, ունեցել են իրենց գրերը։ Այդ են վկայում պատմական տվյալները՝ թե օտարը և թե հայկականը։

Այսպես, հունաց Կարակալլա կայսրը ժամանակ 175—249 թ. անցրած փիլոսոփայության անվանի մատենագիրը ավանդում է, թե ժամանակին մի հովվի են բռնել, որի վզին կապված է եղել ոսկե մանյակ, իսկ մանյակի վրա գրված հետևյալ հայերեն բառերը հայերեն տառերով՝ «Արշակ թագաւոր՝ աստուծոյն Նիւսեայ»։ Այս դեպքը մեջ բերող պատմիչն ավելացնում է. «Այդ ժամանակ հայոց թագաւորն էր Արշակը և կարծում եմ, տեսնելով այդ ինձը, Արշակը նրան նուիրում է Դիոնիսոսին նրա մեծության համար» (Հ. Գ. Զարբ — «Հայկական հին դպրություն», էջ 39)։

Սուրբ Մեսրոպի ամենամերձավոր և սիրելի աշակերտ Կորյունը իր ուսուցչի կենսագրությունը կազմելիս ասում է, որ հայերը հնում ունեցել են իրենց գիրը, բայց նրանց գործածությունը ժամանակին երեսի վրա ընկած մնացել է ու հանվել գործածությունից անբավարար լինելով գործադրության համար. «Զի ոչ էին բաւական նշանագիրքն ողջ ածել զխուզորայս (վանկ, հեգ) և զկապս հայերէն լեզուին»։

Հնթանոս Արշակունյաց ժամանակ արքունիքում գրվում և պահվում էին թագավորների գործերը, որոնք կոչվում էին «Մատեանք թագաւորաց»։ Մեհյանների մեջ էլ հնթանոս հայ քրմերը գրում էին և պահում մեհեաններում կրոնի, մեհեանների պատմությունը և գործերը, որոնք կոչվում էին «Մեհենից մատեանք»։

Այդ «մատեանների» մասին հիշատակություն ունի մեր պատմահայր Մովսես Խորենացին։

Ուրիշ շատ վկայություններ կան հնագույն պատմությունների մեջ, որոնք էլ ավելի են մեզ համոզացնում, որ հայերը հնուց իրենց գիրն ու գրականությունն են ունեցել, սակայն քաղաքական ու այլ



Ս. Սահակ

ZUUR АРМ.ССР

պատճառներով հարկադրված են եղել տիրողների լեզվով խոսել, նրանց գրով գրել, կորցրել են իրենց դիրն ու գրականությունը:

Զորբորդ, հինգերորդ դարերում Հայաստանի արևելյան մասին տիրում էին պարսիկները, արևմտյան մասին հույները:

Այդ երկու ուժեղ պետությունները ձգտել են հայ ժողովրդին ձուլել, գրկելով նրան իր կրոնից, լեզվից ու սեփական գրականությունից:

Մեր աշխարհը իր բնության բազմաղան գեղեցկություններով սքանչելի, իր պտղաբերությամբ հիանալի, իր օդով ու առատ առողջարար ջրերով հրապուրիչ, արևավառ Հայաստանը բազմաթիվ ազգերի ուշադրության կենտրոնն է եղել, որոնք ամեն կերպ ։ շխատել են տիրել նրան և հայերին ձուլել իրենց մեջ: Այդ նպատակին հասնելու համար նրանք ամեն միջոց գործադրել են, սակայն նպատակին չեն հասել, որովհետև անկարող են եղել խորտակել հայերին և խպառ մոռացնել տալ նրանց իրենց լեզուն:

Լուսավորչի քարոզչությամբ քրիստոնեություն ընդունած Հայ ժողովուրդը ամենուրեք իր ազգային եկեղեցիները և իր վանքերն ուներ, բայց այդ ժամանակ հայը իր դիրն ու գրականությունը չուներ: Աստվածաշունչը եկեղեցիներում հունարեն էր կարդացվում և ժողովրդին հայերեն թարգմանվում ու բացատրվում: Դպրոցներում հայ մանուկները հունարեն էին ուսում առանում, գրում, կարդում՝ հետևհետև մոռացության տալով մայրենի լեզուն:

Քրիստոնեությունը Հայաստանում տարածելու նպատակով բազմաթիվ ասորի և հույն վանականներ բերվեցին ու լցվեցին հայոց վանքերը: Նորագարձ Տրդատ թագավորը Լուսավորչի հավանությամբ հրամայական կարգադրություններ հաստատեց ասորի և հույն վանականներին ի հաշիվ աշխատավոր հայ ժողովրդի: Հայ ժողովրդի ինքնուրույն գոյությունը վտանգի առաջ է կանգնած:

Այդ վտանգը պարզ պատկերացավ հայ ժողովրդի գոյությամբ ու նրա ազատությամբ ապրող ու շնչող հանճարեղ մեծ հայրենասեր և հայրենանվեր Երրորդության՝ Սահակ Պարթև Հայրապետի, Մեսրոպ Մաշտոցի և Վռամշապուհ թագավորի առաջ:

Այդ վտանգը կանխելու միջոցներից մեկն էր նաև դանել հայկական գրերը և հայ լեզվով թարգմանել սուրբ Գիրքը ու տալ դաստիարակվող մատաղ սերնդի ու ժողովրդի ձեռքը:

Այս մտքով տարված սուրբ Մեսրոպը թողնում է պալատական բարձր պաշտոնը, վանականի հագուստը հագնում և հայ ժողովրդին ձուլման վտանգից փրկելու դորձին նվիրվում և հայ դիրը գտնելու մտքով ուռապում: Սեփական հայ դիր ունենալու իր այդ հղացումը նա հայտնում է ս. Սահակին և Վռամշապուհ թագավորին:

Նրան օգնության է դալիս Վռամշապուհ թագավորը:

Վռամշապուհ թագավորը լսել էր, որ ասորի Դանիել եպիսկոպոսի մոտ պահված մնացել են հայոց հին գրերը: Թագավորն իր պաշտոնյաներից մեկին՝ Վահրիճին ուղարկում է իր ծանոթ ասորի Հաբել քահանայի մոտ խնդրելով, որ իրեն շատ մոտիկ ասորի Դանիել եպիսկոպոսից խնդրի հայոց գրերը և ուղարկի Հայաստան: Հաբելը Դանիելից ստանում է հայերեն տառերը թվով 22 և ուղարկում հայոց թագավորին:

Մեսրոպ Մաշտոցն աշակերտներ հավաքելով սկսում է այդ տառերով հայերեն ուսուցանել, սակայն փորձն անհաջող է անցնում. միայն այդքան գրերով հնարավոր չի լինում արտահայտել հայոց լեզուն:

Մեսրոպ Մաշտոցն իր հետ վերցնելով իր մի քանի աշակերտներին անձամբ գնում է ասորոց Եդեսիա և Համիդ քաղաքները հայկական գրերը որոնելու: Նա այնտեղ տեսնվում է ասորոց Բաբիլաս և Ակակիոս եպիսկոպոսների նաև ուրիշ հոգևորականների և իշխանների հետ, բայց որոշ արդյունքի չի հասնում: Քաջ ծանոթ լինելով հայոց լեզվի բոլոր հնչյուններին պակաս է տեսնում գրերը, որոնցից Ը-ը ձայնավոր: Մեսրոպ Մաշտոցը ամբողջացնում է հայկական տառերը, լրացնելով տառերի (բուն ոմանց միայն յոթ ձայնավորների) մինչ այդ եղած պակասը և հայերին տառերը ձևավորում Հռոփանոս անունով հույների միջոցով, ապա իր աշակերտների հետ միասին թարգմանում Սուրբ Գրքից Սողոմոնի «Առակաց գիրքը»:

Թարգմանությունը շատ հաջող էր: Մեսրոպն իր աշակերտներով միասին խրդությամբ վերադառնում է Հայաստան:

Գրերի գյուտն անդրանիկ թարգմանության ամենաբերը թարգմանիչներից ավելի առաջ էր հասել Հայաստան: Վաղարշապատին մոտենալիս Ս. Մեսրոպին և նրա աշակերտներին քաղաքից դուրս փառահեղ հանդիսավորությամբ դիմավորում են թագավորը, Սահակ Պարթև Հայրապետը և հայ ժողովրդի մեծ բազմությունը:

Հայաստանի բոլոր վանքերում հետզհետե սկսում են բացվել հայոց դպրոցները, որոնց մեջ ուսուցչության պաշտոն են հանձն առնում Ս. Մեսրոպի և Ս. Սահակի վանական աշակերտները:

Օտար լեզուների վտանգից ազատվում է հայ ժողովուրդը: Ներսես Մեծի հիմնած հազարավոր վանքերը Մայր Էջմիածնի գլխավորությամբ միաժամանակ հայոց դպրոցներն են դառնում և ամեն մեկը մի-մի լուսավոր լապտեր հային առաջ մոտվոր լույս տալու, ազգային լուսավորության ուղին ցույց տալու, հայ ժողովրդի ազատությունը, անկախությունը փրկելու ննջգավոր աշխարհակալ պետությունների շար մտմտուքներից:

«Հայք յաջողեցան իրենց հաւատոյ հետ փրկել նաև ազգութիւն... հաւատք, ազգութիւն, լեզու և մատենագրութիւն զուտն իրենց փրկութիւնը, զուտն իրենց փրկութիւնն ու ազատութիւնը այս Դարեւոր գիւտին և անոր համար եղած ջանից մէջ» (Հ. Գ. Զարբ. «Հայկական հին դպրութեան պատմութիւն» էջ 20):

Սուրբ Սահակ և Ս. Մեսրոպ Մաշտոցը դպրոցներում ավարտած իրենց լավագույն ընդունակ աշակերտներին, թվով 60 հոգու, ուղարկեցին այն ժամանակի համաշխարհային լուսավորության կենտրոնները՝ Աթենք, Ալեքսանդրիա, բարձրագույն ուսում ստանալու, գիտական հարուստ պաշարով Հայաստան վերադառնալու և ավելի ծավալելու մասվոր լույսն ու գիտությունը Հայոց աշխարհում: Դրանց թվում էին Ս. Մեսրոպի և Ս. Սահակի աշակերտներից Կորյուն Սքանչելին, Եղնիկ Կողբացին, Դավիթ անհաղթ փիլիսոփան, Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին, Ղևոնդը, Հովսեփը, Գյուտը և ուրիշները, որոնք գիտության, քաղաքակրթության լույս տան, լույս բերին, լույս տվին իրենց ազգին և արժանապես հայ ժողովրդի սրբերում անմահացան, սուրբ տաճարներում փրփրան ու տոնելի դարձան իրենց անմահ գործերով:

Ս. Մեսրոպի և Սահակի աշակերտները հանձն առան նահատակություն, տաբաժրություն, ամեն տեսակ զոհաբերություն և թիկունքումն ունենալով իրենց դաստիարակած հայ հայրենասեր իշխաններին ամբողջ հավատացյալ ժողովրդի միահամուռ ուժերով հաղթեցին պարսիկներին և այդ հաղթանակով հերոս հայ ժողովուրդը

սքանչելի անուն թողեց իր դարավոր պատմության մեջ։

Փառք, Ծնկաչոք հարգանք Ս. Մեսրոպի և Ս. Սահակի անմահ հիշատակին, որոնց ոսկած դասերով հայ ժողովուրդը պահեց ու պետ-պետ արհավիրքներից փրկեց մեր եկեղեցին և ազգային լեզուն ու հասցրեց մեզ մեր աբդի լուսավոր օրերին։

ՊԱՏՐԻԿ